ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 2

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՏԱԹԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2021 Թ.

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Դու հավանաբար արդեն գիտես ի՞նչ է երաժշտությունը: Դու լսել ես տարբեր երգեր և տարբեր մեղեդիներ առանց խոսքերի: Երաժշտությունը ստեղծվել է շատ վաղուց, երևի այն կա այնքան, որքան կա մարդկությունը աշխարհի վրա: Երաժշտությունը մեզ ուղեկցում է մեր կյանքի ամենավաղ շրջանից, մինչև կյանքի վերջ:

Այսիպսով՝ երաժշտությունը մեզ հետ է, կյանքի թե ուրախ, թե տխուր պահերին:

Երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը

Կան տարբեր երաժշտական ստեղծագործություններ,որոնք ամփոփված են «երաժշտություն» անվան տակ, բայց այդ ստեղծագործությունները բաժանվուն են երեք խմբի:Դրանք են՝

Երգ

Պար

Քայլերգ

Երգ

Երգը երաժշտության ամենապարզ տեսակն է: Երգը կատարվում է ձայնի միջոցով և ունենում է խոսքեր: Երգը սկսվում է նախանվագով ունի քառյակ և կրկներգ: Երևի դու ինքդ էլ ես սիրում երգել և շատ տարբեր երգեր գիտես:

Կոմիտաս

(Սողոմոն Սողոմոնյան)

1969-1935

Ծնվել է Թուրքիայի Քյոթահիա քաղաքում: Կոմիտասը համարվում են հայ երգի Մեսրոպ Մաշտոցը: Նա իր ողջ կյանքը նվիրաբերեց հայ երաժշտությանը, հայ երգի հավաքագրմանը և մշակմանը: Սողոմոնը երկկողմանի որբացավ մանուկ հասակում, մեկ տարեկանը չբոլորած կորցրեց մորը, ապա հորը, բայց ծնողներից ժառանգած երաժշտական ընդունակությունները, գեղեցիկ ձայնը օգնեցին նրան հետագայում հաղթահարել ամենատարբեր դժվարություններ:

Երգի տեսակները

Առաջին երգը,որ մարդն իր կյանքում լսում է, դա մայրիկի երգած օրորն է: Օրորը օրորել բառից է: Օրորները ունենում են մեղմ ու հանդարտ երաժշտություն և հենց այդ մեղմությունն էլ քուն է բերում երեխային:

Քայլերգ

Քայլերգը մեղեդի է, որը առաջացնում է քայլելու ցանկություն: Քայլերգի երաժշտությունը խրոխտ է, իսկ մտքում միշտ ուզում ես հաշվել մեկ, երկու, երեք չորս:

Քայլերգի տեսակները

Քայլերգի տեսակներն են՝ սպորտային, զինվորական, սգո, մանկական: Քայլերգերը հնչում են տոնակատարությունների կամ շքերթների ժամանակ: Կան քայլերգեր, որոնք ուղեկցվում են երգով: Դրանք քայլերգային երգերն են կամ՝ երգ-քայլերգեր:

Երգին, պարին և քայլերգին կարող ենք հանդիպել օպերայում, բալետում և սիմֆոնիայում

Եթե ուշադիր ունկնդրեք օպերա, բալետ կամ սիմֆոնիա, կզգաք ,որ մեծածավալ այս ստեղծագործություններում հաճախ հնչում են մեղեդիներ, որոնք մեզ հիշեցնում են երգ,պար կամ քայլերգ: Օրինակ՝ օպերային ներկայացման այն հատվածներում, որտեղ գործողության մեջ կան շքերթի տեսարան հնչում է քայլերգ: իսկ սիմֆոնիայում կարող է հնչել արդեն ծանոթ երգի մեղեդի:

Արամ Իլիչի Խաչատրյան

1903-1978

Ծնվել է Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում: Երաժշտության հանդեպ սեր է ունեցել դեռ վաղ մանկությունից, երբ մայրիկի կաթսայի կափարիչները օգտագործում էր որպես երաժշտական նվագարան, եռանդագին թխկթխկացնում և իրեն թվում էր, թե երաժշտություն է ստեղծում: Հայրը, նկատելով որդու մեծ սերը երաժշտության հանդեպ, մի կերպ գումար է տնտեսում և մի հնամաշ դաշնամուր գնում որդու համար: Ի՞նչ կիմանար նա, որ որդին դառնալու է մեծանուն կոմպոզիտոր և աշխարհի տարբեր բեմահարթակներից հնչեցնի հայկական երաժշտությունը:

Պար

Պարը մեղեդի է, որտեղ խոսքեր չկան: Այն կատարվում է երաժշտական նվագարանների միջոցով: Պարի մեղեդին ստեղծում է բարձր տրամադրություն և ստիպում մարդուն մարմնի գեղեցիկ շարժումների միջոցով արտահայտել իր ուրախ տրամադրությունը:

Պարի տեսակներ

Մենապար

Խմբապար

Պարերգ

Օպերա

Օպերան երաժշտական ներկայացում է,որտեղ դերակատարները միմյանց հետ խոսում են երգելով: Դերակատարների դերում հանդես են գալիս երգիչներն ու երգչուհիները: Օպերայի ներկայացմանը մասնակցում են նաև երգչախումբը,պարային խումբն ու նվագախումբը: Նվագախումբը տեղավորվում է բեմի տակ հատուկ կառուցված խորշում:

Ալեքսանդր Սպենդիարյան

1871-1928

Ծնվել է Ռուսաստանի Տիխվին քաղաքում: Սպենդիարյանը շատ էր սիրում ունկնդրել մայրիկի դաշնամուրի նվագը, և ինչպես հատագայում ինքն է ասում.

«Մորս նվագը իմ մեջ մեծ սեր արթնացրեց դեպի երաժշտությունը...»

Երևանում օպերայի և բալետի թատրոնի շենքը կրում է Ալեքսանդր Սպենդիարյանի անունը: Թատրոնի բակում կառուցված են Հովհաննես Թումանյանի և Ալեքսանդր Սպենդիարյանի արձանները,որովհետև նրանք միասին ստեղծել են «Ալմաստ» օպերան:

Բալետ

Բալետը պարային ներկայացում է, որտեղ դերակատարները խոսում և պատմություն են պատմում մարմնի նրբագեղ շարժումներով: Բալետում

դերակատարները պարողներն են,մասնակցում է նաև սիմֆոնիկ նվագախումբը, որը ինչպես օպերայում,տեղավորվում են բեմի տակ կառուցված փոսում: Բալետային պարուհիները հագնում են հատուկ մաշիկներ,որոնք կոչվում են

պուանտներ

Սիմֆոնիկ նվագախումբը

երաժիշտների մի մեծ խումբ է, որտեղ բոլորը տարբեր նվագարաններով հնչեցնում են միևնույն երաժշտական ստեղծագործությունը: Երաժշտական նվագարանները բաժանվում են խմբերի՝ լարային,փողային,հարվածային: Ընդհանուր առմամբ երաժիշտերի թիվը տատանվում է 26- մինչև 120: Սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարը

դիրիժորն է, ով իր ձեռքի շարժումներով,դիմախաղի միջոցով և դիրիժորական փայտիկի օգնությամբ ղեկավարում է նվագախումբը: Նվագախմբի կատարման որակը կախված է դիրիժորից, առանց դիրիժորի նվագախումբը չի կարողանա գոհացնել հանդիսատեսին իր կատարման որակով:

<u>Սիմֆոնիա</u>- Մեծածավալ ստեղծագործություն է գրված սիմֆոնիկ նվագախմբի համար: Բաղկացած է հիմնականում չորս մասից: Յուրաքանչյուր մաս կապված է մյուսի հետ, ծափահարել մասերի արանքում չի կարելի: Ստեղծագործությունը ավարտված է համարվում միայն չորրորդ մասից հետո:

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ

1756-1791

Մոցարտը ծնվել է Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում: Նա հրաշամանուկ էր,ով նոտաները գրել սովորել է ավելի շուտ քան՝ տառերը: Մոցարտը երեք տարեկանից նվագել է ջութակ, դաշնամուր, իսկ չորս տարեկանում արդեն ստեղծագործել է: Ապրել է շատ կարճ կյանք,ընդամենը 35

տարի, սակայն այդ կարճ կյանքի ընթացքում մեծ թվով հրաշալի ստեղծագործություններ է հորինել: Նա աշխարհի ամենասիրված և ճանաչված կոմպոզիտորներից է:

Պյոտոր Իլիչ Չայկովսկի

1840-1893

Ծնվել է Ռուսաստանի Վոտկինս քաղաքում: 5 տարեկանում արեն կարողանում էր վարժ դաշնամուր նվագել: Ինչպես Արամ Խաչատրյանի ծնողների այնպես էլ՝ Չայկովսկու ծնողների մտքով չէր անցնում, որ իրենց որդին դառնալու է աշխարհի ամենաճանաչված կոմպոզիտորից մեկը:

-Այն,որ ես կյանքս նվիրեցի երաժշտությանը, պարտական եմ Մոցարտին:Նա ինձ ստիպեց աշխարհում ամենաշատը սիրել երաժշտությունը: Չայկովսկին ունի մանուկների համար գրած բազմաթիվ գեղեցիկ ստեղծագործություններ:

Լյուդվիգ վան Բեթհովեն

1770-1827

Ծնվել է Գերմանիայի Բոն քաղաքում: Բեթհովենի երաժիշտ հայրիկը երազում էր որդին դառնա նույնքան հայտնի,որքան Մոցարտն է և այդ պատճառով ստիպում էր որդուն օր ու գիշեր պարապել,նվագել:Հաճախ նույնիսկ գիշերներն էր նրան քնից արթնացնում և ստիպում պարապել,իսկ երբ շատ էր բարկանում հացից ու ջրից էր նաև զրկում:Նրան բաժին հասած դժվարին կյանքը՝ խլություն, հիվանդություններ, Բեթհովենը հաղթահարեց երաժշտության շնորհիվ:Բեթհովենը նույնիսկ խուլ ժամանակ չդադարեց ստեղծագործել,ավելին՝նրա լավագույն ստեղծագործություններից շատերը նա հորինեց հենց խուլ ժամանակ: